

## ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ՄՐՅՈՒՅԹԻ ՀԱՐՑԱՇԱՐ

1. Ո՞ր էր կատարում Քաջ Նազարի դերը համանուն կինոնկարում:
2. Ո՞վ է խաղում Պեպոյի դերը հայկական առաջին հնչյուն կինոնկարում՝ «Պեպո»:
3. Ո՞վ է խաղում Նժդեհի դերը Համո Բեկնազարյանի «Չանգեզուր» կինոնկարում:
4. Ո՞վ է խաղում գլխավոր դերը «Տերտերի ուխտը» կինոնկարում:
5. Ո՞վ է «Տժվժիկ» կինոնկարի ռեժիսորը:
6. Ո՞վ է խաղում Ավագի դերը «Մենք ենք մեր սարերը» կինոնկարում:
7. Ո՞վ է «Մխիթար սպարապետ» կինոնկարում խաղում Մխիթարի դերը:
8. Ո՞րն է հայկական մուլտիպլիկացիոն առաջին կինոնկարը:
9. Ո՞վ է հայ ամենահայտնի մուլտիպլիկատորը,
10. Ինչպե՞ս է կոչվում Հայաստանում ացկացվող կինոնկարների միջազգային փառատոն:
11. Ինչպե՞ս է կոչվում հայկական առաջին հնչյունային կինոնկարը:
12. Ի՞նչ նշանավոր հայազգի կինոբեմադրիչներ գիտեք, ի՞նչ կինոնկարներ են նրանք նկարահանել:
13. Ի՞նչ նշանավոր կինոդերասաններ գիտեք:
14. Ու՞մ անունով է կոչվում «Հայֆիլմ»-ը:
15. Ո՞վ է «Նռան գույնը» ֆիլմի կինոբեմադրիչը և ու՞մ է նվիրված այն:
16. Հայոց ո՞ր թագուհին է հիմնել Սանահինի վանքը:
17. Արևմտյան Հայաստանի ո՞ր քաղաքի մոտ էր գտնվում նշանավոր Առաքելոց վանքը:
18. Ո՞վ է Երևանում Հայոց մեծ եղեռնի հուշարձանի հեղինակը:
19. Ու՞մ նախագծով է կառուցվել Մարդարապատի հուշահամալիրը:
20. Աշխարհահռչակ ո՞ր ճարտարապետն է նախագծել Անի մայրաքաղաքի Կաթողիկե եկեղեցին:
21. Հայ ճարտարապետության ազդեցությամբ Արևմտյան Եվրոպայում ի՞նչ ճարտարապետական ոճեր են ստեղծվել:
22. Գեղարդավանքի անվանումը ինչի հետ է կապված:
23. Որտե՞ղ է գտնվում Գանձասարի վանքը:
24. Ճոճվող սյունը, որպես հայ ճարտարապետական արվեստի հազվագյուտ մնուշ, ո՞ր վանական համալիրում է գտնվում:
25. Ո՞վ է Երևանի առաջին գլխավոր հատակագծի հեղինակը:
26. Արցախում ի՞նչ ճարտարապետական կոթողներ գիտեք, ովքե՞ր են դրանց հեղինակները:
27. Ե՞րբ և ու՞մ օրոք են կառուցվել Մայր աթոռ Ս.Էջմիածին, Ս.Հռիփսիմե և Ս.Գայանե տաճարները:
28. Հայաստանի մայրաքաղաքներից ո՞րն է կոչվել «Քաղաքամայր», «Տիեզերական», «Հազար ու մեկ եկեղեցիների քաղաք» և այլ անուններով:
29. Աղթամարի Սուրբ Խաչ եկեղեցին հռչակավոր ո՞ր ճարտարապետն է կառուցել:
30. Ո՞ր կղզում է գտնվում Սուրբ Խաչ եկեղեցին:
31. Հայաստանի Հանրապետության ո՞ր մարզում է գտնվում նշանավոր Նորավանքը:

32. Հայաստանի ո՞ր քաղաքում է կառուցված Դավիթ Բեկի հուշարձանը:
33. Ո՞ր նշանավոր վարպետն է ամենաշատ խաչքարեր ստեղծել:
34. Ո՞վ է վերականգնել Գառնիի տաճարը:
35. Եր՞բ է բացվել Ծիծեռնակաբերդի Մեծ եղեռնի զոհերի հուշարձանը:
36. Ո՞վ է «Սահմանք իմաստության»-ի հեղինակը:
37. Ո՞վ է «Եղծ աղանդոց» աշխատության հեղինակը:
38. Ո՞ր գիտնական-փիլիսոփան է հիմնել Գլաձորի համալսարանը:
39. Ո՞ր թվականին է հիմնադրվել Երևանի համալսարանը:
40. Ո՞վ է «Հայ ժողովրդի պատմության տեսություն» աշխատության հեղինակը:
41. Որտե՞ղ է գտնվում Բյուրականի աստղադիտարանը: Ո՞վ է եղել նրա առաջին տնօրենը:
42. Ու՞մ անունն է կրում Երևանի պետական բժշկական համալսարանը:
43. Ո՞վ էր Հայաստանի գիտությունների ակադեմիայի առաջին նախագահը:
44. Հայոց ո՞ր պատմիչն է արժանացել «Պատմահայր» պատվավոր կոչմանը:
45. Ո՞վ է վաղ միջնադարի ամենանշանավոր հայ՝ մաթեմատիկոսը, փիլիսոփան, պատմիչը:
46. Ո՞վ է ստեղծել հայոց առաջին դատաստանագիրքը:
47. Ո՞վ է առաջին հայ տիեզերագնացը:
48. 20-րդ դարի հայ նշանավոր գիտնականներից ո՞ւմ գիտեք:
49. Ո՞ր հայկական տոհմից էր Գրիգոր Մագիստրոսը: Ինչո՞վ է նա հայտնի:
50. Հայ գիտնական,որը հիմնադրել է ստորջրյա հնագիտությունը:
51. Հայ արևելագետ, որը 1934-1951թթ. եղել է Էրմիտաժի տնօրենը:
52. Հայ անվանի ֆիզիկոսներ, որոնք 1945թ. նախագծեցին միջուկային ռիակտորը:
53. Ե՞րբ է ստեղծվել Հայաստանի պատմության թանգարանը:
54. Ո՞վ է Հայաստանի Հանրապետության պետական հիմնի երաժտության հեղինակը:
55. Ի՞նչ հայ գուսաններ գիտեք: Ո՞վ է հայ գուսանական արվեստի գագաթը:
56. Ովքե՞ր են մշակել Հայ եկեղեցու Պատարագը:
57. Ի՞նչ է շարականը:
58. Ո՞վ է մշակել «Կռունկ» երգը:
59. Ո՞վ է հանրահայտ «Սպարտակ» բալետի հեղինակը:
60. Երաժշտական կատարողական արվեստի ի՞նչ հանրահայտ դեմքեր գիտեք:
61. Ո՞վ է «Անուշ» օպերայի հեղինակը և ո՞ր պոեմի հիման վրա է այն ստեղծվել:
62. Հայ ո՞ր նշանավոր երգահանն է հավաքել, գրի առել և մշակել շուրջ 3000 ժողովրդական երգ:
63. Հայ կոմպոզիտոր, որը 1947թ-ին Պրահայի փառատոնում արժանացել է մրցանակի:
64. Ե՞րբ և որտե՞ղ է հիմնադրվել Աղաբաբյան դպրոցը:
65. Ո՞ր թվականին է բացվել Երևանի պետական կոնսերվատորիան և ո՞վ է եղել նրա առաջին ռեկտորը:
66. Ո՞ր թվականին է բացվել Էջմիածնի Գևորգյան ճեմարանը:
67. Որտե՞ղ էր գտնվում Մուրադ-Ռաֆայելյան վարժարանը:

68. Հայերեն առաջին գիրքը Ե՞րբ և որտե՞ղ է տպագրվել:
69. Ե՞րբ է հիմնադրվել Ներսիսյան դպրոցը Թիֆլիսում:
70. Ե՞րբ և որտե՞ղ է լույս տեսել հայկական առաջին ամսագիր «Ազարար»-ը:
71. Հայաստանում Ե՞րբ և որտե՞ղ է հիմնվել առաջին տպարանը:
72. Ո՞վ և Ե՞րբ է ստեղծել հայկական այբուբենը /գրերը/: Ո՞ր գիրքն է առաջինը թարգմանվել հայերեն:
73. Որտե՞ղ է գտնվում Մխիթարյանների միաբանությունը և ո՞վ է եղել նրա հիմնադիրը:
74. Ո՞վ է հիմնադրել Գլաձորի աշխարհահռչակ համալսարանը:
75. Ե՞րբ է հիմնադրվել Մոսկվայի Լազարյան ճեմարանը:
76. Ի՞նչ նյութի վրա են գրվել հայկական հին ձեռագրերը:
77. Ո՞ր նշանավոր վարժարանն է 1897թ. շնորհվել պետական միջնակարգ դպրոցի կարգավիճակ:
78. ՈՒ՞մ անունով է կոչվում Մատենադարանը:
79. Որտե՞ղ է գտնվել Անահիտ աստվածուհու բրոնզե արձանի գլուխը և ձեռքը:
80. Ո՞վ է «Մատյան ողբերգության» աշխարհահռչակ աղոթագրքի հեղինակը:
81. Հայոց հեթանոսական դիցարանի ի՞նչ աստվածներ գիտեք:
82. Քրիստոսի առաքյալներից ո՞վքեր են քրիստոնեությունը տարածել Հայաստանում:
83. Ե՞րբ է Հայաստանում, աշխարհում առաջինը, քրիստոնեությունը պետական կրոն հռչակվել:
84. Ո՞վ էր հին հայերի դպրության աստվածը:
85. Քարանձավ, որից ամեն տարի Համբարձման գիշերը դուրս է գալիս Փոքր Սիերը:
86. Ո՞վ է եղել Մեսրոպ Մաշտոցի առաջին կենսագիրը:
87. Որտե՞ղ է թաղված Մեսրոպ Մաշտոցը:
88. Հայաստանի միակ հեթանոսական տաճարը որտե՞ղ է գտնվում և ո՞ր ստծուն է նվիրված եղել:
89. Ի՞նչ միջնադարյան հայ նշանավոր մանրանկարիչներ գիտեք:
90. Ինչպե՞ս էր կոչվում Հայաստանում արտադրվող բնական ներկը, որն արտահանվում էր աշխարհի շատ երկրներ:
91. Համաշխարհային ճանաչում ունեցող հայ նկարիչ՝ «Հայաստան» կտավի հեղինակը:
92. Հայ ո՞ր նկարիչն է մասնակցել Վանի ինքնապաշտպանական կռիվներին (1915թ)
93. «Վարդանանք» և «Հայոց այբուբենը» կտավների հեղինակն է:
94. Հանրահռչակ ամերիկահայ նկարիչ՝ «Ծաղկավետ ջրաղացի ջրերը» նկարի հեղինակը
95. Ո՞վ է հայ գեղանկարչության նահապետը:
96. Ո՞վ է «Հայերի ջարդը Տրապիզոնում 1895-թ-ին» և «9-րդ ալիք» կտավների հեղինակը:
97. Ինչպե՞ս են ֆրանսահայ հայտնի գեղանկարիչներ Գառզուի և Ժանսենի իսկական անունները:
98. Ինչպե՞ս է ամերիկահայ նշանավոր նկարիչ Արշիլ Գորկու իսկական անունը:
99. 20-րդ դարի մեծանուն հայ նկարիչներից ո՞ւմ գիտեք:
100. Երևան քաղաքի ի՞նչ թատրոններ գիտեք: Ու՞մ անուն են նրանք կրում:

101. Հայկական կրկեսի արտիստ, մնջախաղի արվեստի ամենաականավոր, համաշխարային մեծության աստղ:
102. Ո՞վ և որտե՞ղ է հիմնադրել հայ թատրոնը:
103. Ո՞վ է եղել անտիկ օլիմպիական խաղերի առաջին հայ չեմպիոնը:
104. Հայ շախմատիստներից ո՞վ է առաջինը նվաճել աշխարհի չեմպիոնի կոչումը:
105. Հայ թատերական արվեստի ի՞նչ նշանավոր գործիչներ գիտեք:
106. Ո՞ր դարն է համարվում հայ գրականության ոսկեդարը:
107. Ո՞ր թվականին է Հայաստանը չեմպիոն դարձել շախմատի թիմային առաջնությունում:
108. Մշակույթի ո՞ր ճյուղերն են հիմնականում զարգացում ապրել 10-14դդ. Հայաստանում:
109. Հայ ծանրորդ, Օլիմպիական խաղերի չեմպիոն:
110. Ո՞րն է հայերի հայրենիքը և ինչպե՞ս է այն կոչվում:
111. Ըստ ավանդության ո՞վ է մեր անվանադիր նահապետը:
112. Ո՞րն է Հայկական լեռնաշխարհի ամենաբարձր լեռնագագաթը և որքա՞ն է նրա բարձրությունը:
113. Որո՞նք են Հայկական լեռնաշխարհի խոշոր լճերը:
114. Որո՞նք են Հայկական լեռնաշխարհից սկիզբ առնող նշանավոր գետերը:
115. Որո՞նք են Հայկական լեռնաշխարհի նշանավոր դաշտավայրերը:
116. Լեզուների ո՞ր խմբին /լեզվաընտանիք/ է պատկանում հայոց լեզուն:
117. Ո՞րն է Սևանա լճից սկիզբ առնող միակ գետը:
118. Ո՞ր երկրների հետ է սահմանակից Հայաստանի Հանրապետությունը:
119. Ո՞րն է Հայկական լեռնաշխարհի ամենաջրառատ գետը:
120. Ո՞ր գետն էին հայերը անվանում «Եղեմնաբուխգետ»:
121. Ո՞ր գետն հայ հայ ժողովուրդն անվանում «Մայր գետ»:
122. Ե՞րբ և ո՞ր թագավորն է հիմնադրել Վան քաղաքը:
123. Ե՞րբ և ո՞ր թագավորն է հիմնադրել Էրեբունի /Երևան/ քաղաքը:
124. Ի՞նչ է նշանակում Հայաստանի անվանումներից մեկը՝ Նաիրին:
125. Վանի թագավորության ո՞ր արքան է կառուցել Թեյշեբանի ամրոցը:
126. Ո՞ր արքան է Սարդուրյան գահատոհմի հիմնադիրը:
127. Ե՞րբ է գոյատևել Վանի հայկական թագավորությունը:
128. Ո՞ր թագավորի օրոք է հիմնադրվել Արտաշատը: Հայաստանի Հանրապետության ո՞ր մարզում է այն գտնվում:
129. Ե՞րբ է կազմավորվել Երվանդունիների թագավորությունը:
130. Ո՞ր թագավորն է իրականացրել հայկական հողերի միավորում մեկ պետության կազմում:
131. Ո՞վ է Արտաշեսյան արքայատոհմի հիմնադիրը, ե՞րբ է նա թագավորել, ի՞նչ պատվանունով է հայտնի:
132. Հայոց ո՞ր արքան է ստեղծել աշխարհակալ տերություն Առաջավոր Ասիայում: Ի՞նչ տիտղոս էր նա կրում:
133. Որ՞ն էր Տիգրան Մեծի օրոք Հայաստանի մայրաքաղաքը: Որտե՞ղ է այն գտնվում:

134. Ո՞վ է Մեծ Հայքում Արշակունիների արքայատոհմի հիմնադիրը:
135. Ինչպե՞ս էր կոչվում Հայոց հին թագավորության ամենամեծ գործակալությունը:
136. Հին Հայաստանի նշանավոր ի՞նչ քաղաքներ գիտեք:
137. Ո՞ր տոհմին էր պատկանում հազարապետության գործակալությանը
138. Վաղ միջնադարում ո՞վքեր են գլխավորել հայոց սպարապետություն գործակալությունը:
139. Հայոց արքան է Հայաստանում քրիստոնեությունը պետական կրոն հռչակել և ո՞ր թվականին:
140. Ինչպե՞ս է Էջմիածին քաղաքի հին /նախաքրիստոնեական/ անվանումը:
141. Ո՞ր Հայոց արքան է թագավորել Հռոմում:
142. Ի՞նչ Հայոց արքայատոհմերն են կառավարել Բյուզանդիայում:
143. Ո՞վ է Հայոց եկեղեցու առաջին կաթողիկոսը:
144. Ե՞րբ է տեղի ունեցել Ավարայրի ճակատամարտը:
145. Ինչպե՞ս էին անվանում նախարարական տոհմերի գրանցման հատուկ ցուցակը:
146. Ո՞վ է Հայաստանի Բագրատունյաց թագավորության հիմնադիրը:
147. Ո՞վ և ե՞րբ է հիմնադրել Դվին և Անի մայրաքաղաքները:
148. Բագրատունիների օրոք ո՞ր տոհմին էր պատկանում սպարապետությունը:
149. Ե՞րբ է կործանվել Բագրատունիների թագավորությունը:
150. Բագրատունիների ենթակա թագավորությունից ո՞րն է գոյատևել ամենաերկարը:
151. Ո՞րն էր Բագրատունիների օրոք սպարապետանիստ քաղաքը:
152. Ո՞ր տարածքն է համարվել Բագրատունիների տնտեսական և քաղաքական կենտրոնը:
153. Ո՞վ էր Բագրատունիների օրոք արևմտյան կողմնորոշում ունեցող Իշխանը:
154. Ո՞ր կղզին էր հայոց սպարապետ Թեոդորոս Ռշտունու նստավայրը
155. Նախարարական ո՞ր տոհմին է պատկանել Ամբերդը:
156. Միջնադարում ո՞ր վանքն է եղել Սյունիքի հոգևոր կենտրոնը:
157. Ե՞րբ և ո՞ր տոհմի կողմից է հիմնադրվել Կիլիկիայի հայկական թագավորությունը:
158. Ո՞րն էր Կիլիկիայի հայկական թագավորության մայրաքաղաքը:
159. Ո՞վքեր են Կիլիկիայի հայկական թագավորության արքաները, ի՞նչ գործունեություն են նրանք ծավալել:
160. Ի՞նչ թագավորական տոհմեր են իշխել Կիլիկյան Հայաստանում:
161. Ո՞ր թվականին է կործանվել Կիլիկյան Հայաստանը:
162. Ո՞րն էր Կիլիկյան Հայաստանի մայրաքաղաքը:
163. Ո՞րն էր Կիլիկյան Հայաստանի կաթողիկոսանիստ քաղաքը:
164. Ե՞րբ և ո՞ր տոհմի կողմից է Կիլիկիայում ստեղծվել առաջին հայկական իշխանությունը:
165. Ո՞ր կենդանին էր համարվում Կիլիկյան Հայաստանի խորհրդանիշը:
166. Ո՞րտեղ է ամփոփված Կիլիկյան Հայաստանի վերջին թագավորի աճյունը:
167. Ո՞ր քաղաքն է եղել Չաքարյան Հայաստանի կենտրոնը:
168. Հայ-վրացական զինակցության ժամանակ ո՞ր իշխանական տունն էր գլխավորում ազատագրական կռիվները:

169. 17-18-րդ դարերում հայ ազատագրական շարժման ի՞նչ հայտնի գործիչներ գիտեք:
170. Ո՞վ է գլխավորել Սյունիքի 18-րդ դարի 20-ական թթ. ազատագրական պայքարը:
171. Ո՞վ է եղել Արցախում 18-րդ դարի 20-ական թթ. ազատագրական պայքարի ոգեշնչողն ու կազմակերպիչը:
172. Ո՞ր երկրները այցելել Իսրայել Օրին: Ո՞րն է եղել նրա այցելությունների և հանդիպումների նպատակը:
173. Ո՞ր երկրի դեմ մղվող պատերազմին է մասնակցել Հովսեփ Էմինը:
174. Ի՞նչ գործիչների անունների հետ է կապված 18-րդ դ. Հայաստանի ազատագրման և պետականության վերականգման նախագծեր:
175. Ե՞րբ է տեղի ունեցել Արևելյան Հայաստանի միացումը Ռուսական կայսրությանը:
176. Ե՞րբ է առաջացել հայկական հարցը Միջազգային դիվանագիտության մեջ:
177. Բեռլինի 1878 թ. վեհաժողովում ո՞վ էր գլխավորում հայկական պատվիրակությունը:
178. Որտե՞ղ և ե՞րբ են հիմնադրվել «Միություն ի փրկություն» և «Պաշտպան հայրենյաց» ազատագրական կազմակերպությունները:
179. Ե՞րբ և ո՞ր քաղաքում է հիմնադրվել Արմենականների կուսակցությունը:
180. Ե՞րբ և որտե՞ղ է ստեղծվել Ս.Գ. Հնչակյան կուսակցությունը:
181. Ե՞րբ և որտե՞ղ է հիմնադրվել Հ.Յ. Դաշնակցություն կուսակցությունը:
182. Ովքե՞ր են Արմենականների, Ս.Գ. Հնչակյան և Հ.Յ. Դաշնակցություն հիմնադիրները:
183. Ի՞նչ նշանավոր հայ ֆիդայիներ /հայդուկներ/ գիտեք:
184. Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին հայ կամավորական ջոկատներում որքա՞ն մարտիկներ են եղել: Ովքե՞ր էին կամավորական առաջին, երկրորդ, երրորդ և չորրորդ ջոկատների հրամանատարները:
185. 1915թ. կոտորածների ժամանակ որտե՞ղ են հայերը 40-օրյա ինքնապաշտպանություն կազմակերպել:
186. Ե՞րբ է հիմնականում առաջացել Հայ սփյուռքը:
187. Ե՞րբ են տեղի ունեցել հայ ժողովրդի մայիսյան հերոսամարտերը Սարդարապատում, Գևարաքիլիսայում և Բաշ Ապարանում:
188. Ե՞րբ է հռչակվել Հայաստանի առաջին Հանրապետությունը:
189. Ե՞րբ է ստորագրվել Սևրի պայմանագիրը, որով Հայաստանին էին անցնելու Վանի, Էրզրումի, Բիթլիսի և Տրապիզոնի նահանգների գերակշիռ տարածքները:
190. Ովքե՞ր էին Հայաստանի Առաջին Հանրապետության վարչապետները:
191. Ո՞ր պայմանագրով Սովետական Հայաստանը մնաց 29 հազ. քառ. կմ տարածքի շրջանակներում:
192. Ու՞մ գլխավորությամբ է 1912 թվին ստեղծվել հայոց ազգային պատվիրակությունը:
193. Ո՞վ էր 1918 թ. հայոց ազգային խորհրդի նախագահը
194. Ո՞ր թվականին է հիմնվել ՀՕԿ-ը:
195. Ո՞վ էր 1918 թվին Սրդարապատի ճակատամարտի հրամանատարը:
196. Ո՞վ էր գլխավորում 1918 թվի Բաշ-Ապարանի հերոսական ճակատամարտը:
197. 1921թ. Մոսկվայի պայմանագրի ժամանակ ովքե՞ր էին հայկական պատվիրակության ղեկավարները:

198. Ո՞ր հայագգի ռազմական գործիչը ռուս-թուրքական պատերազմի ժամանակ կովկասյան բանակի հրամանատարը:
199. Երևանի բերդի գրավման ժամանակ ո՞վ էր ռուսական զորքերի հրամանատարը:
200. Հայաստանում ե՞րբ է հաստատվել խորհրդային կարգեր:
201. Ո՞րն է Հայաստանի Հանրապետության պետական դրոշը և ի՞նչ են խորհրդանշում նրա գույները:
202. Ո՞վ էր Հայկական ԽՍՀ-ի զինանշանի հեղինակը:
203. Խորհրդային Ռուսաստանի և քեմալական Թուրքիայի միջև որտե՞ղ և ե՞րբ պայմանագիր կնքվեց: Այդ պայմանագրով Հայաստանի ի՞նչ տարածքներ անցան Թուրքիային:
204. ԽՍՀՄ մարշալ, որը մասնակցել է Սարդարապատի հերոսամարտին:
205. Խորհրդային բանակում որքա՞ն հայ մարշալներ են եղել, ովքե՞ր են նրանք:
206. Կաթողիկոս, որն ընդդիմացավ հայերի տեղահանության Ստալինի ծրագրին:
207. Եվրախորհրդարանը ե՞րբ է դատապարտել Հայոց ցեղասպանությունը:
208. Հայաստանի Գերագույն խորհրդի առաջին նստաշրջանը ե՞րբ է ընդունել Հայաստանի անկախության հռչակագիրը:
209. Ո՞ր պետության զինվորական ուժերի կազմում էր ձևավորվել «հայկական լեզիոնը»:
210. Ի՞նչ խորհրդանիշեր են պատկերված Հայաստանի զինանշանի կենտրոնում
211. Ո՞ր թվականին է Հայաստանը դարձել ՄԱԿ-ի անդամ
212. Ո՞վ էր ՀԲԸՄ-ի առաջին անվանի ղեկավարը:
213. Հայրենական պատերազմում հայ ժողովրդի քանի՞ զավակ է արժանացել Խորհրդային Միության հերոսի կոչմանը:
214. Ո՞րն է Հայաստանի Հանրապետության ամենամեծ մարզը:
215. Ո՞ր թվականից է Հայաստանը Անկախ Պետությունների Համագործակցության հիմնադիր անդամ է:
216. Ո՞ր թվականին Հայաստանի Հանրապետությունը անդամակցեց Եվրախորհրդին:
217. Ո՞ր թվականին Հայաստանի Հանրապետությունը անդամակցեց Առևտրի Համաշխարհային Կազմակերպությանը:
218. Հայկական ո՞ր դիվիզիան է մասնակցել Բեռլինի ճակատամարտին:
219. Ե՞րբ է անցկացվել ԽՍՀՄ-ի կազմից Հայաստանի դուրս գալու հանրաքվեն:
220. Արցախի հինավուրց քաղաք Շուշին ե՞րբ ազատագրվեց ադրբեջանցիներից:
221. Արցախյան գոյամարտի ի՞նչ ականավոր դեմքեր և հերոսներ գիտեք:
222. Ո՞րն է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության մայրաքաղաքը:
223. Եր՞բ է ընդունվել ՀՀ Սահմանադրությունը:
224. Ո՞րն է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության մայրաքաղաքը:
225. Ո՞վ էր ԼՂՀ առաջին նախագահը:
226. Ե՞րբ է հռչակվել Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը: